ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն _______ /Լ.Ա. Հովհաննիսյան/

« 1 » 09 2022 թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## «2022-2023» ուստարի

Վ. Կարապետյանի անվան N3 հիմնական դպրոց

8դ դասարան

Դասղեկ՝ Փիրուզ Ժորայի Խաչատրյան

## Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

8դ դասարանում սովորում են 23 աշակերտ՝ 12 աղջիկ, 11 տղա: Տղաները չարաճճի են, ակտիվ, սակայն դժվար դաստիարակվողներ չկան: Աշակերտները աչքի են ընկնում իրենց լավ վարքով ու բարձր առաջադիմությամբ: Դպրոց հաճախում են բարեխղճորեն, կատարում են տրված հանձնարարությունները, հարգում և սիրում եմ միմյանց, օգնում հարկ եղած պահին:

Դասղեկ-աշակերտ փոխհարաբերությունները ճիշտ կառուցելու դեպքում կունենանք կուռ և համերաշխ կոլեկտիվ:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Աշակերտներին ճիշտ դաստիարակելու համար անհրաժեշտ է նրանց լավ ճանաչել, իմանալ նրանց հոգեբանությունը, հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները: Յուրաքանչյուր աշակերտ պետք է լինի իմ ուշադրության կենտրոնում: Նրանց հետ կանցկացվեն բազմաթիվ զրույցներ, որոնք կնպաստեն հասարակության համար գաղափարաբարոյապես զարգացած անհատի ձևավորմանը: Պետք է հետևենք մանկապատանեկան հեռուստահաղորդումներին, ինտելեկտուալ խաղ-մրցույթներին: Նախատեսված է կազմակերպել առարկայական մրցույթ-վիկտորինաներ: Մտերմիկ ու բարեկամական հարաբերություններ մշակելու համար կկազմակերպվեն ցերեկույթներ, արշավներ, էքսկուրսիաներ և այլ արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներ: Կայցելեն թանգարաններ, պատկերասրահներ:

3. Հայեցի դաստիարակություն

- Հոգևոր դաստիարակություն

Հայ ժողովրդի քրիստոնյա հավատը միշտ էլ ազգասիրական նշանակություն է ունեցել: Սակայն ցավալի է, որ այսօր զանազան աղանդներ փորձում են մասնատել Հայ Առաքելական եկեղեցին՝ իրենց շարքերը քաշելով նաև անչափահասներին: «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի միջոցով աշակերտները կստանան հայեցի դաստիարակություն՝ ծանոթանալով մեր ժողովրդի հոգևոր արժեքներին:

- Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտի ընդհանուր զարգացման գործում շատ է կարևորվում գեղագիտական դաստիարակությունը: Հենց այս տարիքում նրանք պետք է կարողանան տեսնել ու զգալ գեղեցիկը, պոեզիայի, երաժշտության, գեղանկարչության հմայքն ու

ներդաշնակությունը: Այս ամենի համար կայցելենք պատկերասրահներ, տուն-թանգարաններ, կինոթատրոններ:

- Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Մեր ժողովրդի դարավոր պատմության պանծալի հաղթանակների գործում մեծ է եղել հայոց բանակի դերն ու նշանակությունը: Յուրաքանչյուր հայորդի պետք է գիտակցի, որ բանակն է պետության հիմքը, իսկ ազգային բանակում ծառայելը հպարտություն է: Հայրենասիրություն դաստիարակելիս միշտ պետք է հիշել մեր փառավոր անցյալը:

- Ֆիզիկական դաստիարակություն

«Առողջ մարմնում՝ առողջ հոգի» կարգախոսով պետք է առաջնորդվել ամբողջ կյանքում: Յուրաքանչյուր աշակերտ պետք է ձգտի լինել հաղթող, լինել առաջինը, իր կյանքի նշանաբաններից մեկը դարձնելով «Արագ, ուժեղ, բարձր» կարգախոսը: Բոլոր առավոտները պետք է սկսվեն կոփումներով և հիգիենիկ մարմնամարզությամբ:

- Աշխատանքային դաստիարակություն

«Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն», «Արհեստը ոսկե բիլազուկ է»՝ այս և նման օրինակ ասույթները պետք է լինեն աշակերտների հանապազօրյա «հացը»: Յուրաքանչյուրը պետք է պատասխանատվության ու պարտաճանաչության մեծ զգացումով կատարի իր հանձնարարությունները, մասնակցի շաբաթօրյակներին:

- Բնապահպանական դաստիարակություն

Բնության պահպանությունը մեր բոլորի պարտքն է: Պահպանելուց բացի, պետք է խնդիր դնել մեր առջև աճեցնել, տնկել, բազմացնելբույսեր: Չվնասել կենդանական աշխարհը, արգելել որսագողությունը: Գարնանը ծառատունկ կազմակերպել: Ամռանը կազմակերպել «Մաքուր պահենք շրջապատը» միջոցառումները:

- Դպրոց-ընտանիք կապը

Շատ սերտ պետք է լինի դպրոց-ընտանիք կապը: Պետք է իմանալ, թե ինչ պայմաններում է ապրում աշակերտը, ինչպիսի սոցիալական և հոգևոր պայմաններ են ստեղծված ընտանիքում երեխաների համար: Պետք է կազմակերպել ծնողական ժողովներ, ծնողական խորհրդի հետ աշխատել, կազմակերպել ծնողների հետ զրույցներ և հանդիպումներ:

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

| N | ազգանուն | անուն | հայրանուն | ծննդ. օր, ամիս, տարի | սեռը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Աբաջյան | Ստեփան | Կարոյի | 16.07.2009 | Ար |
| 2. | Ավագյան՛ | Անահիտ | Արամի | 03.06.2009 | Իգ |
| 3. | Ավետիսյան | Թամար | Գուրգենի | 07.06.2008 | Իգ |
| 4. | Գրիգորյան | Լիլիթ | Արթուրի | 07.04.2009 | Իգ |
| 5. | Թորոսյան | Աբրահամ | Արշալույսի | 27.11.2009 | Ար |
| 6. | Խաչատրյան | Անի | Դավիթի | 16.02.2009 | Իգ |
| 7. | Խաչատրյան | Գոհար | Սևակի | 27.11.2008 | Իգ |
| 8. | Հայթյան | Մերի | Սիմոնի | 26.05.2009 | Իգ |
| 9. | Հարությունյան | Դավիթ | Միշայի | 28.01.2009 | Ար |
| 10. | Հարությունյն | Ռաֆֆի | Գրիգորի | 28.06.2009 | Ար |
| 11. | Համբարձումյան | Էրիկ | Վահագնի | 15.10.2009 | Ար |
| 12. | Պետրոսյան | Սամվել | Միսակի | 30.06.2009 | Ար |
| 13. | Հովսեփյան | Գայանե | Գարեգինի | 10.01.2009 | Իգ |
| 14. | Հովսեփյան | Դավիթ | Արմանի | 20.10.2009 | Ար |
| 15. | Հովսեփյան | Հովիկ | Կարենի | 14.07.2009 | Ար |
| 16. | Ղուկասյան | Գոհար | Գուրգենի | 01.06.2009 | Իգ |
| 17. | Մարգարյան | Մոնա | Տիգրանի | 21.09.2009 | Իգ |
| 18. | Մարության | Արման | Կարենի | 21.08.2009 | Ար |
| 19. | Միքայելյանց | Աննա | Արմենի | 24.03.2009 | Իգ |
| 20. | Մկրտչյան | Կարինե | Արմենի | 05.08.2009 | Իգ |
| 21. | Սահակյան | Նարեկ | Արմանի | 02.09.2009 | Ար |
| 22. | Վարդանյան | Ջոն | Պարգևի | 13.09.2008 | Ար |
| 23. | Սիմոնյան | Սերինե | Արմանի | 20.03.2009 | Իգ |

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

I կիսամյակ

| Ուս/շ | Ուս. աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարող |
|---|---|---|---|
| I | Ծանոթանալ աշակերտների հետ, ստեղծել համախմբված, միասնական կոլեկտիվ, մասնակցել «Գիտելիքի օր» միջոցառմանը: | 2.09 | դասղեկ |
| II | Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները: Զրույց «Դասագրքերի կարևորությունը»: | 9.09 | դասղեկ |
| III | Զրույց՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության տոնին: «Հայաստանն իմ տունն է, իմ անունն է»: Պատի թերթ: | 16.09 | դասղեկ |
| IV | Ուղիղ մեկ տարի անց: Դեռ չեն ցամաքել արցունքները: Հարգենք 44 օրյա պատերազմի զոհերի հիշատակը: Հիշենք նրանց՝ մեր օրերի հերոսներին: | 23.09 | դասղեկ |
| V | Ուսուցիչը բարության և իմաստնության սերմնացանն է: «Խոնարհվում ենք Ձեր առաջ» թեմայով զրույց: | 30.09 | դասղեկ |
| VI | Հայաստանի պետական պաշտոնական խորհրդանիշների մասին հավաքել և ներկայացնել տեղեկություններ: | 7.10 | դասղեկ |
| VII | «Ինչն է լավ, ինչն է վատ այս կյանքում» թեմայով զրույց: | 14.10 | դասղեկ |
| VIII | «Կապույտաչյա գեղեցկուհի իմ Սևան»: Արշավ դեպի Սևանի թերակղզի: Զրույց «Իմ հարազատ բնօրրանը»: | 21.10 | դասղեկ |
| IX | «Աշխարհի յոթ հրաշալիքները» և «Հայաստանի հրաշալիքները» թեմայով զրույց: | 11.11 | դասղեկ |
| X | Դասարանի սանիտարահիգենիկ վիճակի ստուգում: Զրույց «Անձնական հիգիենայի կանոնները և դրանց պահպանումը» | 18.11 | դասղեկ |
| XI | Զրույց «Ասա ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու» թեմայով: Ինչպես ենք ընտրում մեր ընկերներին: Զրույց ընկերասիրության և ընկերական փոխօգնության թեմայով: | 25.11 | դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XII | «Բնական և տեխնածին աղետներ»: Տեղեկություն 1988թ. ավերիչ երկրաշարժի մասին: Զրույց «Բարությունը կփրկի աշխարհը» թեմայով: | 2.12 | դասղեկ |
| XIII | Կովիդ 19 և աշխարհը: Ինչպես պաշտպանվել Կորոնավիրուսից: Կրենք դիմակ, փրկենք կյանքեր: | 9.12 | դասղեկ |
| XIV | Առողջ ապրելակերպի անհրաժեշտությունը: «Առողջ սնունդ, առողջ ազգ», «Ռացիոնալ և առողջ սնունդ», «Առողջ մարմնում՝ առողջ հոգի»: | 16.12 | դասղեկ |
| XV | Դիմավորենք ամենասիրելի տոնը՝ Ամանոր, Նոր Տարի, Նավասարդ Կաղանդ՝ ինչ անուն էլ ունենա, այն սպասված տոն է բոլորիս համար: | 23.12 | դասղեկ |

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
II կիսամյակ

| Ուս/շ | Ուս. աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարող |
|---|---|---|---|
| I | Հայոց եկեղեցու տոները: Սուրբ Ծնունդ | | դաստիարակ |
| II | Ինչ եմ տանում դպրոցից: Դպրոցը մեր տունն է: Իմ իրավունքներն ու պարտականությունները: | 10-15.01 | դաստիարակ |
| III | «Հպարտ քայլիր հայ զինվոր»: Հայոց բանակի ծննդյան տոնը: Զրույց ռազմահայրենասիրական թեմայով: | 28.01 | դաստիարակ |
| IV | Քաղաքավարության կանոնները: Վարքի կուլտուրայի ձևավորում: | 13.02 | դաստիարակ |
| V | «Տյառնընդառաջ»: Տեղեկություն տոնի մասին: | | դաստիարակ |
| VI | «Գիրքը մեր հավատարիմ բարեկամն է ու լավ ընկերը»: Գիրք նվիրելու օրը: Ինչ եմ կարդացել վերջին անգամ: | 19.02 | դաստիարակ |
| VII | Ինչ անել տագնապի ժամանակ: Քաղպաշտպանության օրը՝ մարտի 1: | 01.03 | դաստիարակ |
| VIII | «Բնապահպանության անհրաժեշտությունը»: | 08.03 | դաստիարակ |
| IX | «Սիրում եմ քեզ Հայոց լեզու»: | 15.03 | դաստիարակ |
| X | «Իմ սիրած հեռուստահաղորդումը»: | 23.03 | դաստիարակ |
| XI | 2016թ. Ապրիլ 2: «4 օրյա պատերազմի հերոսների անունները մեր սրտում են»: | 02.04 | դաստիարակ |
| XII | Իմ ընտանիքը: «Մայր իմ անուշ ու անգին» վերնագրով պատի թերթ: | 07.04 | դաստիարակ |
| XIII | 1915թ. ապրիլի 24: Ոճրագործությունը չի մոռացվում: «Արյունից են ծնվում կակաչները» թեմայով զրույց: Պատի թերթ լույս ընծայում: | 24.04 | դաստիարակ |
| XIV | Հաղթանակների մասին: «Շուշին փրավոր է»: Արցախյան պատերազմի հերոսների մասին զրույց: | 02.05 | դաստիարակ |

| | | | |
|---|---|---|---|
| XV | «Գարունն այնքան ծաղի է վառել, Գարունը այնպես անուշ է կրկին»: | 06.05 | դասղեկ |
| XVI | Աշխարհին ժպիտ ու ծիծաղ է պետք: | 11.05 | դասղեկ |
| XVII | Ո՛չ պատերազմներին: Թող ջինջ ու խաղաղ լինեն բոլոր առավոտները: | 18.05 | դասղեկ |
| XVIII | «Աշխարհի մյուս ծայրում ապրող իմ հասակակի՛ց, բարև, ես հայ եմ»: | 25.05 | դասղեկ |
| XIX | Տարվա ընթացքում կատարված աշխատանքների քննարկում և ամփոփում: Բարձր առաջադիմությամբ և լավ վարքով աշակերտների խրախուսում: Էքսկուրսիայի կազմակերպում: | 02.06 | դասղեկ |

## ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

| 1-ին կիսամյակ | |
|---|---|
| Շաբաթվա օրը | դասաժամը |
| Ուրբաթ | 8 |

## ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

| Անցկացման օրը | Քննարկվող հարցերը | Համառոտ բովանդակությունը |
|---|---|---|
| 15.09.2022 | Ծնողական խորհրդի ընտրություն, կազմակերպչական հարցեր | Ջեկուցեց դասղեկը, արտահայտվեցին ծնողները և կազմավորվեց ծնողական խորհուրդ: |
| | | |

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

| | ազգանուն, անուն, հայրանուն | հեռախոս |
|---|---|---|
| Նախագահ | Թաղևոսյան Աստղիկ Սուրիկի | 077-603059 |
| Անդամներ | Մանուկյան Արփինե Գագիկի<br>Սարգսյան Աքսաննա Սարգիսի | 094-900796<br>055-444405 |

Դասղեկ՝  /Փ. Խաչատրյան /

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

| | ազգանուն, անուն, հայրանուն | հեռախոս |
|---|---|---|
| Նախագահ | Թադևոսյան Աստղիկ Սուրիկի | 077-603059 |
| Անդամներ | Մանուկյան Արփինե Գագիկի<br>Սարգսյան Աքսաննա Սարգիսի | 094-900796<br>055-444405 |

Դաստիարակ՝ /Փ. Խաչատրյան /